Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 517 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է հիմնել առաջին օգնության ուսուցման և ծառայության համազգային համակարգ, որը կմեծացնի բնակչությանը մարդասիրական աջակցության տրամադրման հնարավորությունները և կնպաստի ավելի դիմակայուն և պատրաստված հասարակության ձևավորմանը՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում Հայկական Կարմիր խաչի ընկերության Առաջին օգնության ուսումնական կենտրոնների միջոցով տարածելով կյանք փրկող առաջին օգնության գիտելիքներ և հմտություններ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություն-ներից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Կարմիր խաչի միջազգային կոմիտե, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա, Շվեյցարական Կարմիր խաչ
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Երևան, Պարոնյան 21/1, Հարկ վճարողի հաշվառման համար 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության մարզեր, բնագավառը՝ առողջապահական
6.	Ծրագրի բյուջեն	84 859 500 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության բնակչություն (մոտ 10 000 մարդ), տարբեր տարիքային, մասնագիտական (ներառյալ՝ բուժաշխատողներ, մանկավարժներ, վարորդներ, լրագրողներ, զբոսաշրջության ոլորտի աշխատողներ, ժամանցի ոլորտի աշխատողներ, փրկարարներ, մարզիչներ, երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցողներ), խոցելի խմբեր (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների 2000 բնակիչներ, տեղահանված անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք) (թիրախային խմբեր), նաև Հայկական Կարմիր խաչի ընկերության աշխատակազմ և կամավորներ, որոնք ընդգրկված են առաջին օգնության դասընթացների իրականացման և ծառայության մատուցման գործողություններում:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	10. 06.2022 թվական – 31.12.2022 թվական
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողություններն են՝ 1. Թիրախային խմբերի շրջանում առաջին օգնության գիտելիքների և հմտությունների ձեռքբերման խթանում՝ առաջին օգնության դասընթացների կազմակերպման միջոցով Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջին օգնության ուսուցման և ծառայության տրամադրման կարողությունների հետագա զարգացում. առաջին օգնության կենտրոնների տեխնիկական հագեցվածության ապահովում, դասընթացավարների և հրահանգիչների թիմի ընդլայնում, դասընթացավարների և հրահանգիչների վերապատրաստում: Թիրախային խմբերի համար առաջին օգնության դասընթացների կազմակերպում վերապատրաստված և ատեստավորված կամավոր-հրահանգիչների միջոցով: Մասնակցություն Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի որակավորման գործընթացներին և ատեստավորման թարմացում: Դասընթացների մոդուլների մշակում՝ ըստ թիրախ խմբերի առանձնահատկությունների, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալների, մշակված մոդուլների հիման վրա դասընթացների իրականացում, դասընթացների վերաբերյալ պաշտոնական կայքէջի ստեղծում և վարում, ներառյալ՝ դասընթացների բովանդակային և տեխնիկական հարցերի շուրջ տեղեկատվության մշակում և պարբերաբար թարմացում: Առաջին օգնության ծառայություն մատուցող թիմերի, ներառյալ՝ կամավորների կազմակերպում և վերապատրաստում: Ջանգվածային միջոցառումների ընթացքում առաջին օգնության ծառայության իրականացում և անհրաժեշտության դեպքում առաջին օգնության ցուցաբերում: Բյուջե՝ 53 674 172 դրամ, այդ թվում Հայաստանի Հանրապետության 11 մարզերում Հայկական Կարմիր խաչի ընկերության ուսումնական կենտրոնների առաջին օգնության 22 կամավոր-հրահանգիչներին ճանապարհածախսի և սննդի համար վճարվող գումար՝ ընդհանուր 7 392 000 դրամ (յուրաքանչյուր դասընթացի համար 42 000 դրամ), անհատ խորհրդատուներին՝ մասնավորապես ճարտարապետ, իրավաբան, բժիշկ, մեթոդիստ և այլն վճարվող գումար՝

		ընդամենը 13 801 844 դրամ, Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջին օգնության ծառայության միջազգային ատեստավորման թարմացման համար նախատեսված մասնակցության վճար 2 700 000 դրամ: Ժամկետ՝ 10. 06.2022 թվական - 31.12.2022 թվական: 2. Առաջին օգնության գիտելիքների տարածման համար նախապայմանների ստեղծում Առաջին օգնության վերաբերյալ օրենսդրական դաշտի բարելավում. առաջին օգնության ուսուցման և ծառայության կանոնակարգման տեսանկյունից ազգային օրենսդրության վերլուծություն և վերջինիս բարելավման նպատակով առաջարկությունների մշակում և ներկայացում համապատասխան գերատեսչություններ, գործող օրենք(ներ)ում առաջին օգնության վերաբերյալ դրույթներ սահմանող օրենքի նախագծի մշակմանն աջակցություն: Առաջին օգնության գիտելիքների և հմտությունների կարևորության վերաբերյալ հանրության իրազեկության բարձրացում. տեղեկատվական նյութերի, տեսանյութերի պատրաստման և տարածման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ 165 կամավորների կողմից համայնքներ այցեր կատարելու միջոցով: Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի հետ համատեղ Առաջին օգնության բջջային հավելվածի մշակում և գործարկում: Բյուջե՝ 14 602 000 դրամ, այդ թվում կամավորներին ճանապարհածախսի և սննդի համար վճարվող գումար՝ 5 775 000 դրամ՝ հետևյալ հաշվարկով 165 կամավոր *7 ամիս *5 այց *1000 դրամ: Ժամկետ՝ 10. 06.2022 թվական - 31.12.2022 թվական: 3. Ծրագրի կառավարման և հաշվետվողականության ապահովման համար կազմակերպական ծախսեր, ինչը ներառում է գործունեության համար անհրաժեշտ գրասենյակների կահույքի, տեխնիկայի, գրենական պիտույքների ձեռքբերում, վառելիքի, կապի ու կոմունալ ծախսերի վճար, հյուրանոցային ծառայությունների և գործուղման ծախսեր: Բյուջե՝ 16 583 328 դրամ: Ժամկետ՝ 10. 06.2022 թվական - 31.12.2022 թվական:

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը՝ 1. Հայկական Կարմիր խաչի ընկերության առաջին օգնության կենտրոնների համար վերանորոգման ծառայությունների և կահույքի ձեռքբերում՝ 4 000 000 դրամ արժողությամբ 2. Առաջին օգնության ուսումնամեթոդական կենտրոնի տարածքի վարձակալության գումարի վճարում՝ 4,133,328 դրամ արժողությամբ 3. Առաջին օգնության դասընթացների և ծառայության տրամադրման համար սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 3,000,000 դրամ արժողությամբ 4. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում՝ 1,194,000 դրամ արժողությամբ 5. Առաջին օգնության վերաբերյալ տեսանյութերի նկարահանման ծառայությունների ձեռքբերում՝ 2,880,000 դրամ արժողությամբ 6. Թարգմանչական ծառայությունների ձեռքբերում՝ 2,280,000 դրամ արժողությամբ 7. Ծրագրի իրականացման համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 2, 000,000 դրամ արժողությամբ 8. Թիրախ խմբերի առանձնահատկություններին համապատասխան առաջին օգնության վերաբերյալ տեղեկատվական և իրազեկման նյութերի տպագրության ծառայությունների ձեռքբերում՝ 1,000,000 դրամ արժողությամբ 9. Առաջին օգնության պարագաներով արկղիկների ձեռքբերում՝ 15,000,000 դրամ արժողությամբ 10. Կոմունալ ծախսերի վճարում՝ 600,000 դրամ արժողությամբ 11. Լուսաբանման և կապի ծառայությունների ձեռքբերում՝ 3,920,000 դրամ արժողությամբ 12. Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում, այդ թվում՝ դահլիճների վարձակալության գումարի վճարում, սննդապահովում, ուղևորափոխադրում՝ 3,000,000 դրամ արժողությամբ 13. Ավտոմեքենայի վառելիքի ձեռքբերում՝ 180,000 դրամ արժողությամբ 14. Գործունեության համար անհրաժեշտ գրենական պիտույքների ձեռքբերում՝ 1,350,000 դրամ արժողությամբ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 16,583,328 դրամ արժողությամբ, որը ներառում է աշխատավարձ ծրագրի անձնակազմի համար՝ 8,153,328 դրամ, հյուրանոցային ծառայությունների և գործուղման ծախսեր՝ 3,000,000 դրամ, գրենական պիտույքների ձեռքբերում՝ 1 350 000 դրամ, վառելիքի ձեռքբերում՝ 180, 000 դրամ, կոմունալ ծախսեր՝ 600 000 դրամ, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 2,000,000 դրամ, վերանորոգման ծառայությունների և կահույքի ձեռքբերում՝ 4,000,000 դրամ:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության մարզերում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվական միջոցների հետ սերտ համագործակցությամբ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տրամադրել եռամսյակային և ավարտական հաշվետվություններ Կարմիր Խաչի միջազգային կոմիտեին, Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիային, Շվեյցարական Կարմիր խաչին, որոնց կողմից պարբերաբար կատարվելու են նաև մոնիտորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպում Երևանում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգոր-ծական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

15.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ